

ԱՆԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԳՐԱՐԱՐՈՒՄ

Պ. Ի. ՇԱՐԱՐԻԱՆՅԱՆ

1. Նախադասության մեջ միավորված բառերը քերականորեն կապակցվում են իրար հետ մի որոշակի և հստակ միտք արտահայտելու համար: Այդ կապակցությունը լինում է հոլովներով, համաձայնությամբ, շարահասությունով, շաղկապներով և այլն: Ամեն լեզու ունի բառերի կապակցության իրեն հատուկ օրենքները, և դրանք խախտելու դեպքում նախադասության միտքը կամ նրա մեջ մտնող բառերից մեկի կամ մյուսի իմաստը մոթ և անհասկանալի է մնում: Երբեմն, սակայն, կապակցության ընդունված կարգը խախտվում է, և այնուամենայնիվ արտահայտված միտքը հասկանալի է լինում: Վերջինք հետևյալ օրինակը. Մառան, ուր ականջներով չի լսում, մկաններով են լսել տալիս նրան: Սա մի բարդ ստորադասական նախադասություն է, որի մեջ երկրորդական նախադասությունն ընկած է գլխավորի մեջտեղը: Գլխավորի առաջին բառը՝ ծառան, իր հոլովական ձևով չի կապվում նույն նախադասության շարունակության հետ: Եթե հանենք երկրորդական նախադասությունը, գլխավորը կմնա հետևյալ տեսքով՝ Մառան մկաններով են լսել տալիս նրան: Բայի խնդիրը՝ ծառան, սրտք է դրվել տրական հոլովով, բայց դրված է ուղղականով, այդ պատճառով վերջում դրված է դրա նշանակությամբ մի լացահայտիչ բառ՝ բայի պահանջած հոլովով՝ Նույն, որով պետք է դրված լինեիր առաջին բառը: Քերականորեն կապակցված ձևով, ուրեմն, նախադասությունը պետք է լինեիր այսպես՝ ծառային, որ ականջով չի լսում, մկաններով են լսել տալիս: Նույն նախադասությունը գրաբարում, որից թարգմանաբար բերվեց այստեղ, հետևյալ ձևով է. ծառայ, որ ընդ ունկն ոչ լսէ, ընդ մկանունս տան լսել նմա (Եզնիկ, Գիրք 1-ին, ԺԵ, էջ 43): Վերևում բացատրված ձևով վարվելով՝ որպես բացահայտիչ դրված բառը հանելով, նրա հոլովը տալով առաջին բառին և ստեղծելով բառերի քերականական կապակցություն, կրատանա՞նք հետևյալը. ծառայի, որ ընդ ունկն ոչ լսէ, ընդ մկանունս տան լսել: Այս երևույթը, երբ նախադասության մի անդամ քերականորեն ընդունված կանոններով չի կապակցվում նախադասության մյուս անդամների հետ, բայց իմաստը հասկացվում է, կոչվում է անկապակցություն:

Անկապակցությունն ընդհանրապես բանավոր խոսակցական լեզվին է հատուկ, երբ մարդ արագ խոսելով կամ անուշադիր լինելով՝ իր խոսքը չի կազմում քերականական կանոններով: Բայց անկապակցության զանազան տեսակներ գտնում ենք նաև գրավոր լեզվի մեջ¹ թե՛ աշխարհագրում և թե՛ մտնավանդ գրաբարում, որտեղ այն երևան է գալիս ավելի հաճախ և բազմազան ձևերով: Անկապակցություն համարվում են ոչ ամեն տեսակի քերականական շեղումները, այլ միայն այնպիսիները, որոնք լինում են որոշ կանոններով, իմաստի մթություն չեն առաջացնում և սխալ չեն համարվում: Տեսնենք՝ գրաբարի անկապակցության բնորոշ տեսակները:

2. ա. Վերևում բացատրվածն անկապակցության տեսակներից մեկն է, նույն տեսակից են նաև հետևյալ օրինակները:

Ամենայն մարդ և անասուն, որ գտցի ի դաշտի և ոչ մտցէ ի տուն, անկցի ի վերայ նորա կարկուտն... (Ելք, Թ, 19 = ամեն մարդ և անասուն, որ կգտնվի դաշտում և չի մտնի տուն, նրա վրա կարկուտ կթափվի): Կապակցված ձևով նախադասությունը պետք է լինեիր այսպես. Ի վերայ ամենայն մարդոյ և ան-

¹ Տե՛ս Ա. Այտքենյան, Քերականության աշխարհագրի կամ արգի հայերեն լեզվի, Վիեննա, 1866, էջ 264—267, Մ. Արեղյան, Երկեր, հ. Գ, Երևան, 1974, էջ 407:

նասնոյ, որ գտցի ի դաշտի և ոչ մտցէ ի տուն, անկցի կարկուտն կամ փոխված շարադրությամբ՝ Անկցի կարկուտն ի վերայ ամենայն մարդոյ և անասնոյ, որ գտցի ի դաշտի և ոչ մտցէ ի տուն: Ներքեի բոլոր օրինակները կարելի է այսպես շրջել՝ երկրորդական նախադասութիւնը հետադաս դնելով: Գուրն, զոր փորեաց: Կեղեցի, ի նոյն անկցի ի խորխորատ (Սաղմոս, է, 16. = Գուրն, որ փորեց և խորացրեց, (ինքը) կրննի նույն խորխորատի մեջ): Առաջին բառը պետք է լինի ի նախորդով հայցական՝ ի գուրն՝ ի նոյն խորխորատ անկցի, զոր փորեաց և պեղեաց: Մարդ, որ ոչ լուիցէ, զոր խաւիցի մարգարէն յանուն իմ, ես խնդրեցից լուիցէ ի նմանէ (Բ. Աւրէնք, ԺԸ, 19 — Այն մարդը, որ չլսի իմ խոսքերին, որ մարդարեւ խոսի իմ անունով, ես երաձից վրեժ կ'լուծեմ), փոխանակ՝ ի մարդոյ, որ ոչ լուիցէ, ... ես խնդրեցից զվրէժ: Մովսիսնադ, որ առանձինն... սպանող է, նովմբ զմաղծս հնացեալս հնարին բժիշկը հատանել (Եզնիկ, Գիրք 1-ին, ԺԵ, էջ 47—48, = Մովսիսնադ, որ առանձին սպանող է... երաձով բժիշկները հնար են դառնում և նացած մաղծերը հեռացնելու), փոխանակ՝ Մովսիսնադ, որ առանձինն սպանող է, զմաղծս հնացեալս հնարին բժիշկը հատանել: Մարդք, որ ոչ ի կապանաց զանգիտեն, և ոչ ի տանջանաց երկնչին, ... ո՞վ է, որ կարէ նոցա դիմակաց լինել (Եզնիկ, էջ 59, = Մարդիկ, որ ոչ կապանքներից ես վախենում, ոչ տանջանքներից են երկնչում, ... ո՞վ է, որ կարող է նոցա դիմադրել), փոխանակ՝ Մարդկան, որ ոչ ի կապանաց զանգիտեն, ... ո՞վ է, որ կարէ դիմակաց լինել, կամ փոխված շարադրությամբ՝ Ո՞վ է, որ կարէ դիմակաց լինել մարդկան, որ ոչ ի կապանաց զանգիտեն, ոչ...: Այնեֆիկ, որ և ոչ անձանց խորհեցան բարի առնել և անուն յիշատակի յաշխարհի թողուլ, ի՞նչ արդեաւ և մեղադրութիւն մեր այնպիսեացն ի ճահ պատահիցէ (Խոր, Գիրք 1-ին, էջ 10—11), փոխանակ՝ Այնեֆիկ, որ և ոչ անձանց խորհեցան..., ի՞նչ արդեաւ մեղադրութիւն մեր ի ճահ պատահիցէ, փոխված շարադրությամբ՝ ի՞նչ արդեաւ մեղադրութիւն մեր ի ճահ պատահիցէ այնեֆիկ, որ և ոչ անձանց խորհեցան...:

Երաւարտ է, որ երկրորդական նախադասութիւնն ամբողջությամբ ընկնում է սկզբում, և նրա վերջում դրվում է ուղղականով բառը, իսկ գլխավորն ընկնում է երկրորդականից հետո. Որ փրկեաց զնոսա հզաւրն, Տէր Ամենակալ անուն է նոքա (Երեմիա, Մ, 34), փոխանակ՝ Տէր Ամենակալ անուն է հզաւրն, որ փրկեաց զնոսա: Կամ գլխավորն է լինում սկզբում, իսկ նրանից հետո ընկնում է երկրորդական նախադասութիւնը. Ոչ կարեմք սուտ խաւսել այնք, որ զամենայն ինչ գիտէ Աստուած, փոխանակ՝ Ոչ կարեմք սուտ խաւսել Աստուծոյ, որ զամենայն ինչ գիտէ:

Երբեմն գլխավոր նախադասության շարունակության մեջ չի դրվում բացահայտիչ բառը, և միայն իմաստից է հասկացվում դա: Օրինակ՝ Ամենայն մարդիկ, որ ըմպեն զնա՝ յիմարեցուցանէ զմիտսն (Ա. Եզր, Գ. 18), որի մեջ բացակայում է սեռականը՝ զմիտս նոցա: Կապակցված ձևով պետք է լինեն Յիմարեցուցանէ զմիտս ամենայն մարդկան, որ ըմպեն զնա:

Երբեմն գլխավոր նախադասության առաջին բառը դրվում է ոչ թե ուղղականով, այլ այն հոլովով (և նախորդով), որով դրված է հարաբերականը՝ հոլովների ձգողության օրենքով: Օրինակ՝ Ամենայնի, որում շատ տուաւ, շատ խնդրեցի ի նմանէ (Ղուկ., ԺԲ, 48): Այս նախադասության մեջ ամենայն բառը չի դրվել ոչ բացառականով, ինչպես նախադասության իմաստն է պահանջում, ոչ էլ ուղղականով՝ վերեւի օրինակների նման, այլ նմանվելով հարաբերականի հոլովին՝ դրվել է տրականով: Կապակցված ձևով պետք է լինեն Յամենայնէ, որում շատ տուաւ շատ խնդրեցի կամ փոխված շարադրությամբ՝ Շատ խնդրեցի յամենայնէ, որում շատ տուաւ:

2. ր. Որ հարաբերական դերանունը նախադասության իմաստի պահանջած հոլովով դրվելու փոխարեն երբեմն դրվում է ուղիղ ձևով, բայց նրանի հետ դրվում է մի թյուր բառ, սովորաբար որևէ դերանուն՝ պահանջված հոլովով:

Օրինակ՝ Իսկ արդ ո՞ր կարէ շար ինչ խորհել ի վերայ ազգիս այսորիկ, որք ունին այդպիսի գեղեցկութիւն կանայք նոցա (Յուդիթ, Ժ, 18). որք դերանունը պետք է դրվեր սեռականով, ինչպես վերջում ավելադրութեամբ դրված է նոցա բառը: Կապակցված ձևով կլինի այսպես՝ ...ո՞ր կարէ շար ինչ խորհել ազգիս այսորիկ, որոց կանայք ունին այդպիսի գեղեցկութիւն: Ունիմք շինուածս յերկինս, որ ոչ երևին արքունիքդ առ նոքա (Նիդիշէ, էջ 147), փոխանակ՝ ...առ որով ոչ երևին արքունիքդ:

Երբեմն, սակայն, պահանջված հոլովով բացահայտել բառը չի դրվում, և միայն որ հարաբերականի ուղիղ ձևով հասկացվում է դրա իմաստը, օրինակ՝ Սկսան հարկանել ի ժողովրդենէ անտի վիրաւորս ... առ ճանապարհան, որ մին ելանէր ի Բեթէլ, և մեան ելանէր ի Գաբաա (Դատաւորք, Ի, 31), փոխանակ՝ ... յորոց մին ելանէր ի Բեթէլ...:

Երբեմն որ հարաբերականի տեղ դրվում է զի շաղկապը, օրինակ՝ Չոյ աստ այր մի ի դրան քում, զի իրքդ այդ նովաւ վճարին (Ագաթ., §44, էջ 38 = Այստեղ քո պալատում կա մի մարդ, որի միջոցով այդ գործը գլուխ կգա), փոխանակ՝ որով վճարին իրքդ այդ: Ո՞չ ա, գ այն Մուշեղ է, զի զարքայն Պապ հրամանաւ դորա և դորին խորհրդով զաւրավարքն Յունաց սպանին (Բուզանդ, 5-րդ դար., 15, էջ 360), փոխանակ՝ Որոյ հրամանաւ և խորհրդով զարքայն Պապ սպանին: Խնդրեաց էած անտի կին ի կայսերական տոհմէն, զի անուն էր նորա Ողոմայի (Բուզանդ, 4-րդ դար., ԺԾ, էջ 192), փոխանակ՝ որոյ անուն էր Ողոմայի:

2. գ. Նախադասութեան համադաս անդամները դրվում են նույն քերականական ձևով՝ նույն հոլովով, նույն նախդրով ու հոլովով և այլն: Սակայն երբեմն կապակցութեան այս կանոնավոր ձևը խախտվում է, նույն պաշտոնն ունեցող անդամները դրվում են տարբեր բառաձևերով: Օրինակ՝ Յապստամբելն նորա ի նաբոգոդոնոսորայ արքայէ և անցանելոյ զերդամաբքն, ... խրատացոյց զպարանոց իւր (Բ Մնացորդաց, 12, 13, = Երբ նա ապստամբեց նաբոգոդոնոսոր արքայից և խախտեց երդումը կամ՝ ապստամբելով և խախտելով, խստացրեց իր պարանոցը): Այստեղ նույն պաշտոնն ունեցող երկու բառերից առաջինը դրված է ի նախդրով հայցական՝ յապստամբելն, իսկ մյուսը տրական հոլովով՝ անցանելոյ, որով խախտվել է համադաս բառերի նույնաձևութեան կանոնը: Երկուսն էլ պետք է նույն հոլովաձևով լինեին՝ յապստամբել, յանցանել:

Նույնպիսի անկապակցութեան օրինակներ են և հետևյալները. Ի ժողովել բազում ժողովրդոց և ըստ քաղաքաց քաղաքաց եկելոցն առ նա, ասէ առական (Ղուկաս, Ը, 4, = Երբ շատ ժողովուրդ հավաքվեց և բոլոր քաղաքներից մարդիկ եկան նրա մոտ, առական ասաց), փոխանակ՝ ի ժողովել... և ... ի գալ: Ապա ժողով լինէր նախարարացն և իշխանացն, գործակալք և զաւրագլուխք, պետք ... (Բուդ., 3-րդ դար., Ի, էջ 84, = Ապա հավաքվում էին նախարարները, իշխանները, գործակալները, զորագլուխները, պետերը...), փոխանակ՝ ժողով լինէր նախարարացն և իշխանացն, գործակալացն, զաւրագլուխաց, պետաց, կամ՝ ժողովին նախարարքն, իշխանքն, գործակալք, զաւրագլուխք, պետք: Եւ ոչ ոք էր, որ մնացեալ էր առ թագաւորին, և ոչ գունդ և այլեւծի, բայց միայն սակաւ սպասաւորաւ հանդերձ և որսոցն պառակեաւ և ռահվիրայ մարդկան և խառնիճաղանջ խորանապահ գաւրուն և ռամիկսպաս գաւրաւն և տիկեաւն հանդերձ և արքայադիւն մանուկն Արշակ (Բուդ., 3-րդ դար., Ի, էջ 84): Այստեղ ընդգծված բառերը, որպես նախադասութեան համադաս անդամներ, պետք է դրված լինեին նույն հոլովական ձևով՝ ուղղականով, ինչպես առաջին երկու և վերջին ընդգծված բառերն են, ուրեմն՝ սպասաւորք, պառակեաւ և այլն, և կամ ամբողջը պիտի լինէր նույնութեամբ, ինչպես բերված է, բայց առանց վերջին և շաղկապի՝ Ոչ ոք էր, որ մնացեալ էր առ թագաւորին, և ոչ գունդ և այլեւծի, բայց, միայն սակաւ սպասաւորաւ հանդերձ ... արքայադիւն մանուկն Արշակ:

Ապա տալիս հրաման Շապուհ արքայ Պարսից բերել շքեղության և արկանել ի պարանոցն Արշակայ, ...և խաղաղացուցանել զնա ի յԱնդամն, ... և պնդեալ զնա մինչև անդէն մեռցի (Բուդ., 4-րդ դար., ՄԴ, էջ 260): Այս նախադասության մեջ ետ հրաման բայի նույն պաշտոնն ունեցող խնդիրներից առաջինն էր զորով լինում անհրաժեշտ դերբայով՝ բերել, արկանել, խաղաղացուցանել, իսկ վերջինը անցյալ դերբայով՝ պնդեալ, սա նույնպես պետք է լիներ անորոշ դերբայով՝ պնդել:

2. դ. Նույն ենթական ունեցող անցյալ դերբայի և դիմավոր բայի միջև երբեմն դրվում է և շաղկապ, որի հետևանքով նախադասության սկիզբը քերականորեն չի կապվում նրա շարունակության հետ՝ սկսվում է մի ձևով և վերջանում է մի ուրիշով: Օրինակ՝ Ապա ռխացեալ թագաւորն ընդ պատանեկին Գնելոյ և բազում անգամ հալածական առնէր զնա (Բուդ., 4-րդ դար., ԺԵ, էջ 184): Այս միտքը կապակցված ձևով պետք է արտահայտված լիներ կամ դերբայական դարձվածով պարզ նախադասությամբ՝ առանց և-ի, կամ և շաղկապով կապված և դիմավոր բայերով երկու համադաս նախադասությամբ, այսպես՝ 1) Ապա ռխացեալ թագաւորն ընդ պատանեկին Գնելոյ՝ բազում անգամ հալածական առնէր զնա: 2) Ապա ռխացաւ թագաւորն ընդ պատանեկին Գնելոյ և բազում անգամ հալածական առնէր զնա: Բուզանդի բնագրից բերված նախադասությունը այս երկու կանոնավոր ձևերի անքերական խառնուրդ է: Հետևյալ օրինակներն անկապակցության այս նույն տեսակից են, ուստի բերվում են առանց կանոնավոր ձևերը նշելու: Ըս հաբեալ չորս ցիցս ի դետինն, երկուս ոտիցն և երկուս ձեռացն, և պրկեցին զնա (Աղաթ., § 198, էջ 114): Իսկ այլոցն առ ժամանակ մի թողութիւն արեալ և զամենայն վնասուն պատճառս արկանէր զկապելովքն (Եղիշէ, էջ 20): Մոնչելով բարբառ արձակեալ և ասէ (Եղիշէ, էջ 44): Գուցէ տեսեալ զարջառ և զոչխար եղբար քո մոլորեալս ի ճանապարհի և առես առնիցես զնոսա (Երկր. Աւրինաց, ԻԲ, 1): Իբրև ամս երկու կարգեալ զվարդապետութիւն իւր և նովին նշանագրովք տանէր (Կորիւն, էջ 44): Ընկալեալ զլրտեսսն և ընդ այլ ճանապարհ արձակեաց (Թուղթ Յակովբայ, Բ, 25):

Կարող է անցյալ դերբայի փոխարեն անորոշ դերբայի գործիականը լինել, ինչպես հետևյալ օրինակում՝ Երէցն Մրջիւնիկ անուն տալով յեկեղեցւոյն Ողոմայեայ տիկնոջն ընձեռել զմահուն գործ և սպանանէր (Բուդ., 4-րդ դար., էջ 194):

Նույնը լինում է նաև ուրիշ շաղկապներով և շաղկապական բառերով, օրինակ՝ Ի ծննդենէն ևեթ մոլորութեամբ լեալ, մինչ, նովիմբ և վախճանեցաւ (Խոր., էջ 192): Ըս նորա անյուսացեալ յինէն, նմին իրի առաքեաց զբաժանայապետն Հիւրկանոս (Խոր., էջ 140):

2. ե. Ստորադասական շաղկապով կամ մի հարաբերական բառով կապված երկրորդական նախադասության բայը, որ պետք է դրվի դիմավոր ձևով, երբեմն դրվում է անցյալ դերբայով, իսկ գլխավորինը՝ դիմավոր ձևով: Օրինակ՝ Զոր իբրև լուեալ արքային, ասէ (Բուդ., 4-րդ դար., ԺԵ, էջ 192): Այս նախադասությունը խառնուրդ է հետևյալ երկու կանոնավոր ձևերի. 1) բարդ ստորադասական նախադասություն դիմավոր բայերով՝ զոր իբրև լուաւ արքայն, ասէ. և 2) պարզ նախադասություն դերբայական դարձվածով, առանց շաղկապի՝ զոր լուեալ արքային՝ ասէ: Բուզանդի բնագրում խոսքը կազմված է այս երկուսի անհետևողական խառնուրդով: Այլ օրինակներ՝ Ապա թագաւորն Պարսից, քանզի զայս լուեալ ի քաղէիցն, տաճիկ ուղտուք արձակէ ի հայս արս գհոդոյ և զջրոյ (Բուդ., 4-րդ դար., ՄԴ, էջ 256), փոխանակ՝ 1) առանց շաղկապի՝ զայս լուեալ ...արձակէ, կամ 2) դիմավոր բայով՝ քանզի զայս լուաւ, ... արձակէ: Այլ քեպէա և վաղու լուեալ զրաւթն, ոչ ինչ ժամանեաց հասանել յամբովկ գործոյն պատերազմի (Աղաթ., § 18, էջ 24): Զոր քեպէա և վաղ գիտացեալ Մեծին Ներսիսի, ոչ յառաջ քան զկոտորելն ժամանեաց հասանել (Խոր., էջ 289):

2. զ. Բարդ ստորադասական նախադասության կազմի մեջ մտնող երկրորդական նախադասությունը, որ զլխավորի հետ կապվում է մի ստորադասական շաղկապով, երբեմն դիմավոր բայի փոխարեն ունենում է անորոշ գերբայ, որից առաջանում է քերականական անհետևողականություն: Օրինակ՝ Պարտ է, զի ի դաշտէն ի լեռնակողմն փռխել (Փարպ. էջ 298): Այս նախադասությունը խառնուրդ է հետևյալ երկու ձևերի. 1) պարզ նախադասություն դերբայական դարձվածով, այդ դեպքում ավելորդ է զի շաղկապը՝ պարտ է ի դաշտէն ի լեռնակողմն փռխել, և 2) բարդ նախադասություն, որի մեջ երկրորդականը կսկսվեր զի շաղկապով և կունենար դիմավոր բայ՝ Պարտ է, զի ի դաշտէն ի լեռնակողմն փռխիցուք: Այլ օրինակներ՝ Արձակեաց մեծաւ հանդերձաւ, բաղում պատուիրանաւ, զի զՅուդա ինքնին ի գրտխովին զբռամբ արկանել (Բ Մակ., ԺԴ, 13), փոխանակ՝ 1) Արձակեաց... զՅուդա... զբռամբ արկանել, կամ 2) Արձակեաց... զի զՅուդա ... զբռամբ արկանիցեն: (կամ՝ արկցեն): Նո հրաման, զի զՍուբերիոս արկանել ի բանդ (Բուզ., 4-րդ դպր., Ը, էջ 156), փոխանակ՝ 1) ետ հրաման զՍուբերիոս արկանել ի բանդ, կամ 2) ետ հրաման, զի զՍուբերիոս արկցեն (կամ արկանիցեն) ի բանդ: Հրաման տայր վասն առաքինւոյն Գայիանեայ, քե նախ զըլեզուն ընդ ծործորական հաճել և ապա սպանեալ (Ադաթ., § 205, էջ 118), փոխանակ՝ 1) Հրաման տայր ... հանել, կամ 2) Հրաման տայր, ... թե(—զի) հանցեն:

3. Վերևում նկարագրված անկապակցության ձևերը, որքան էլ քերականորեն անկանոն են, այնուամենայնիվ, եթե կարելի է ասել, մի տեսակ օրինականացված են: Բայց գրաբարյան հին երկերի մեջ հանդիպում են նախադասություններ, որոնք կազմված են քերականական այնպիսի ձևերի խառնուրդով, որոնք իրար հակասող և բացառող են: Այդպիսի անհետևողական ձևերը լեզվի օրենքների բացահայտ խախտում են ներկայացնում և, ինչպես կտեսնենք ներքևում, ամենայն հավանականությամբ բնագրի աղճատման հետևանք են: Տեսնենք այս տեսակի անհետևողականություններից հետևյալները:

3. ա. Անցյալ դերբայով և նմ բայով կազմվող բաղադրյալ ժամանակները գրաբարում երկու ձև են ունենում. դրանք կազմվում են նմ բայի տարբեր դեմքերով և համապատասխան ենթականերով՝ (ես) տեսեալ եմ, (դու) տեսեալ ես և այլն, կամ բոլոր դեմքերի եզակի և հոգնակի թվի համար վերցվում է բայի միայն եզակի երրորդ դեմքը, որի հետ դրվում է սեռական հոլովով մի խնդիր՝ ենթակայական սեռական՝ իմ տեսեալ է, քո տեսեալ է, մեր տեսեալ է և այլն: Այս վերջինները քերականորեն անենթական նախադասություններ են, քանի որ դրանց սեռական խնդիրները՝ իմ, քո, մեր, ձեր և այլն, որ աշխարհաբար թարգմանվում են որպես ենթական, ոչ թվով, ոչ էլ դեմքով չեն համաձայնում բայի հետ, որը միշտ անփոփոխ կերպով եզակի երրորդ դեմքով է դրվում, ուստի դրանք՝ սեռականները, գրաբար կապակցություններում չեն կարող դիտվել որպես ենթական: Հազվադեպ գործածությամբ, սակայն, այս երկու տարբեր կազմությունների (ես տեսեալ եմ—իմ տեսեալ է) խառնուրդ է դուրս գալիս: Օրինակ՝ ...առ պարսպան Նրուսաղեմի, զոր եին ճոցա սրբեալ (Նէեմի, Բ, 13), փոխանակ՝ 1) ... զոր եին նոքա սրբեալ, կամ 2) զոր էր նոցա սրբեալ: Այսպիսի օրինակ է նաև հետևյալը՝ Իմ ի մանկութենէ իմմէ համակ ի ճակատու և ի կուլ մտեալ եմ ... (Բուզ., 5-րդ դպր., Ծ, էջ 308), փոխանակ՝ 1) ես մտեալ եմ, կամ 2) իմ մտեալ է:

3. բ. Բաղադրյալ ժամանակների վերահիշյալ ենթակայական սեռականով ձևերը, եթե անցյալ դերբայն անցողական բայից է, կրավորական իմաստ չեն ունենում, այլ միայն ներգործական: Այսպես, իմ տեսեալ է ձևը նշանա-

2 Այս տեսակի անկապակցության բացատրությունը տե՛ս Վ. Չալքիսյան, Քննական քերականություն հայկազենան լեզվի, Վիեննա, 1895, էջ 460:

կում է ես տեսել եմ, ի տարբերություն ես տեսեալ եմ ձեռի, որ կարող է և՛ ներգործական և՛ կրավորական իմաստ ունենալ՝ ես տեսել եմ, ես տեսնվել եմ: Բայց երբեմն ենթակայական սեռականով ձեռքի հետ հայցական խնդրից բացի դեպքում է նաև բացառական հոլովով մի ներգործող խնդիր, որ կրավորական և բայերին է հատուկ և քերականորեն չի կապվում հայցականով դրված ուղիղ խնդրի հետ: Օրինակ՝ ... ուր զառաջինն էր շինեալ զեկեղեցին ի հաւոյն նոցա Գրիգորէ (Բուլ., 3-րդ դպր., ԺԹ, էջ 76): Պետք է լիներ կամ 1) ... ուր զառաջինն էր շինեալ զեկեղեցին հաւոյն նոցա Գրիգորի (= որտեղ առաջին եկեղեցին շինել էր նրանց պապ Գրիգորը), կամ 2) ... ուր առաջինն (ուղղական) էր շինեալ եկեղեցին ի հաւոյն նոցա Գրիգորէ (որտեղ առաջին եկեղեցին շինված էր նրանց պապ Գրիգորի կողմից): Զի թեպէտ և յԱստուծայ էր պարգևեալ զյաղթութիւնն յամս կենաց երանելոյն Թէոդոսի... (Խոր., էջ 310): Պետք է լիներ կամ 1) Թեպէտ և Աստուծոյ էր պարգևեալ զըրպագութիւնն... (= թեպէտ Աստված էր պարգևել հաղթությունը), կամ 2) Թեպէտ և յԱստուծոյ էր պարգևեալ յաղթութիւնն (= թեպէտ և Աստուծոյ էր պարգևած հաղթությունը):

Երբեմն ներգործական բայի պարզ ժամանակի հետ գործածված գտնում ևնք հայցականով ուղիղ խնդիր և բացառականով ներգործող խնդիր, որոնք քստ լեզվի կանոնների շնն կարող միևնույն բայի հետ դրվել և բացառում են միմյանց: Օրինակ՝ ... ուր արգելին զնա ի խուռն պատերազմին ի զաւրաց անտի (Բուլ., 5-րդ դպր., է, էջ 316): Սա անկանոն խառնուրդ է հետևյալ երկու յապակցությունների. 1) ուր արգելաւ նա ... ի զաւրաց անտի (= որտեղ շըրջապատվեց (շրջապատվել էր) նա զորքերի կողմից, և 2) ուր արգելին զնա... զաւրքն (= որտեղ շրջապատեցին (շրջապատել էին) նրան զորքերը):

4. Քերականական անկանոնության այս վերջին երկու (3. ա., 3. բ.) ձևերը, ինչպես նշվեց վերևում, կարող են լինել բնագրի աղճատման հետեւվածք, մի բան, որ կարող է պարզել միայն այդպիսի ձեռք պարունակող բնագրերի տարբեր ձեռագրերի համեմատությունը: Արդեն որոշ երկերի տարբեր հրատարակությունների և ձեռագրական այլընթերցվածների համեմատությունը երևան է հանում բնագրի այդպիսի աղավաղման փաստեր: Այսպես, օրինակ, Եզնիկի «Ծղծ աղանդոց» գրքի հրատարակություններում (Վենետիկ, 1825, 1850, Կ. Պոլիս, 1871, Թիֆլիզ, 1914 և այլն) կա հետևյալ ընթերցվածը. Եւ ոչ որս երբեք, որպէս մարդկան, արարեալ են վիշապաց (Եզնիկ, Գիրք 1-ին, էջ 73): Այս նախադասության կազմությունը համապատասխան է վերևում՝ 3. ա. կետում նկարագրված անկանոնությանը: Այն ուղղվում է գոյություն ունեցող միակ ձեռագրով, որի մեջ բացակայում է եւ բայը: Ըստ այդմ ուղղված է «Ծղծ աղանդոց»-ի 1959 թ. Փարիզի հրատարակության մեջ այսպես՝ Եւ ոչ որս երբեք, որպէս մարդկան, արարեալ վիշապաց:

Այլ օրինակներ. Աշխարհն այն, ուստի դոցա եկեալ են. այսպիսի անկանոն ընթերցված, համապատասխան վերևի 3. ա. կետին, ունեն Բուզանդի վենետիկյան 1832, 1914, 1933 թթ. հրատարակությունները (Բուլ., 4-րդ դպր., գլ. Ե), իսկ այլ հրատարակություններ՝ Ս. Պետերբուրգի 1883, Վենետիկի 1889, Թիֆլիսի 1912 թթ. տալիս են ուղիղ ձևը՝ Աշխարհն այն, ուստի դոքա եկեալ են (Բուլ. էջ 140):

Եզնիկի «Վասն Վարդանայ...» գրքի 1957 թ. քննական հրատարակության 51-րդ էջի ծանոթագրության համաձայն մի քանի ձեռագրեր և տպագիր հրատարակություններ ունեն այս նույն՝ 3. ա. կետի անկանոնությանը համապատասխան հետևյալ ընթերցվածը. ... ձեռ արարեալ և կատարեալ իցէք, մինչդեռ ուրիշ ձեռագրեր և տպագիր հրատարակություններ ունեն ուղիղ ձևը՝ ... ձեռ արարեալ և կատարեալ իցէ (Եզնիկ, էջ 51):

Աղաթանգեղոսի գրքի 1909 թ. քննական հրատարակության 127-րդ էջի 13-րդ ծանոթագրության համաձայն մի քանի ձեռագրեր և տպագրություններ

3 Տե՛ս Հ. Աճառյան, Քննություն և համեմատություն Եզնիկ նորագյուտ ձեռագրին (Հայագիտական հետազոտություններ, Երևան, 1976, էջ 143):

ունեն վերևի 3. բ. կետին համապատասխան հետևյալ անկանձն ընթերցվածը. Զիա՞րդ էր հնար այդմ լինել, եթե ոչ յԱստուծոյ էր ասեալ զիրաւունս յաղթութեանն, բայց ուրիշ ձեռագրեր և տպագրութիւններ տալիս են ուղիղ և կանոնավոր ձևը... եթե ոչ Աստուծոյ էր ասեալ զիրաւունս յաղթութեանն (Ագաթ., էջ 136):

Աստվածաշնչի շատ հրատարակութիւններում՝ Վենետիկի 1805, 1860 թթ. և այլն, գտնում ենք հետևյալը. Եւ ահա շնորհեալ է քեզ յԱստուծոյ զամենեւեալ, որ են ընդ քեզ ի նաւիդ (Գործք առաքելոց, Իէ, 24): Սա նույնպես համապատասխան է վերը նկարագրված 3. բ. կետին: Նույն նախադասութեան ուղիղ ձևը գտնում ենք Աստվածաշնչի այլ հրատարակութիւններում՝ Ս. Պետրոսբուրգի 1817 և Կ. Պոլսի 1895 թ.: Այսպես՝ Եւ ահա շնորհեալ է քեզ Աստուծոյ զամենեւեալ, որ են ընդ քեզ ի նաւիդ (= և ահա Աստված շնորհել է քեզ այն բոլորը, որոնք քեզ հետ են նավի մեջ): Ուղիղ ձևն, անշուշտ, այստեղ ևս ունի ձեռագրական հիմնավորում:

Սակայն միայն այս անկանոն ձևերը (3. ա., 3. բ.) չեն, որ ուղղվում են ձեռագրերի և տպագիր հրատարակութիւնների տարբեր ընթերցվածներով: Անկապակցութեան վերևում նկարագրված (2. ա.—2. գ.) ձևերը նույնպես հաճախ ուղղվում են և կարող են ուղղվել նույն երկրի տարբեր ձեռագրերի և հրատարակութիւնների օգնութեամբ:

Այսպես, օրինակ, վերևում դրված 2. ա. կետին համապատասխան անկապակցութիւն է հետևյալը. Դուք, որ թողէք զիս, ...ես մասնեցից զձեզ ի սուր (Նսալի, ԿԵ, 11—12), որ գտնում ենք Աստվածաշնչի 1805, 1860 և այլ թվականների հրատարակութիւններում: Ուղիղ ձևը կա 1817 թ. Ս. Պետրոսբուրգի և 1895 թ. Կ. Պոլսի հրատարակութեան մեջ, որտեղ բացակայում է, որ հարաբերական դերանունը՝ Դուք թողէք զիս, ...ես մասնեցից զձեզ ի սուր:

Համաձայն Մովսէս Խորենացու «Պատմութիւն Հայոց» գրքի 1913 թ. Տըփղիսի քննական հրատարակութեան տողատակի ծանոթագրութեան՝ մի քանի ձեռագրեր և տպագիր հրատարակութիւններ ունեն այսպիսի ընթերցված՝ Իսկ ի լինել սխալանաց ինչ Զրադաշտի առ տիկինն և հակառակութեան ի ներքս անկանելոյ, պատերազմ ի վերայ նորա յարուցանէ ... (Նոր., էջ 56, 3-րդ ծանոթագրութիւն), որի մեջ նույն պաշտոնով երկու անորոշ դերասաններից մեկը դրված է հայցականով և ի նախդրով՝ ի լինել, մյուսը տրականով՝ անկանելոյ: Սա համապատասխան է վերևի 2. գ. կետին: Ուրիշ տպագրութիւններ և ձեռագրեր, սակայն, տալիս են ճիշտը՝ երկու դերասան էլ ուղիղ ձևով, որ և դրված է բնագրում՝ Իսկ ի լինել սխալանաց ինչ Զրադաշտի առ տիկինն և հակառակութեան ի ներքս անկանել...:

Աստվածաշնչի Վենետիկի 1805, 1860, Ս. Պետրոսբուրգի 1817 և այլ թվերի հրատարակութիւններում կա հետևյալը. Թաւրափեալ զձորձս իւր և ասէ ցնոսա (Գործք առաքելոց, ԺԸ, 6), որը համապատասխան է վերևի 2. բ. կետին: Այն ուղղված է 1895 թ. Կ. Պոլսի հրատարակութեան մեջ՝ Թաւրափեաց զձորձս իւր և ասէ: Ուղղումն այստեղ ևս, ինչպես նախորդ օրինակներում, անշուշտ կատարված է որևէ ձեռագրի կամ ձեռագրերի հիման վրա:

Նույն տեսակի անկապակցութիւն է նաև հետևյալը. Ոմն ի հրեշտակաց յանձնահիցն զնդէն ստամբակեալ և ի բաց զնաց, որ դրված է Եղիշեի «Վասն Վարդանայ...» գրքի 1957 թ. քննական հրատարակութեան 37-րդ էջի տողատակի 5-րդ ծանոթագրութեան մեջ որպես մի քանի ձեռագրերի և տպագրութիւնների այլընթերցված, մինչդեռ ուրիշ ավելի շատ ձեռագրեր և տպագրութիւններ դնում են ուղիղ և քերականորեն կապակցված ձևը՝ Ոմն ի հրեշտակաց յանձնահիցն զնդէն ստամբակեալ և ի բաց զնացեալ ... զանլինելի յոյսն առաջի գծէր:

Ըստ Ագաթանգեղոսի 1909 թ. Տփղիսի քննական հրատարակութեան 74-րդ էջի 15-րդ ծանոթագրութեան մի քանի ձեռագրեր և տպագիր հրատարակութիւններ ունեն՝ Զմարդկին զարհուրեցուցանին զի ի պաշտաման գիցն յուր վեղոյ, որ համապատասխան է անկապակցութեան վերևի 2. գ. տեսակին: Ուրիշ ավելի շատ ձեռագրեր և տպագիր հրատարակութիւններ ունեն նույնի

ճիշտ ընթացվածը՝ Զմարգիկն զարհուրեցուցանեին վասն պաշտաման դիցն լուծվելու):

Վերևում 2. դ. կետում Ղազար Փարպեցուց բերված օրինակի համար հրատարակիչները տողատակի 29-րդ ծանոթագրության մեջ նշել են՝ «Թերևս՝ պարտ է մեզ ի ...», այսինքն ենթադրել են նախադասության հնարավոր երկու ուղիղ ձևերից, որ նշվեց վերևում, առաջինը:

Անկապակցության տարածված ձևերին (2. ա.—2. գ.) զուգահեռ կապակցված ձևերի առկայությունը ձեռագրերում և տպագիր հրատարակություններում կարելի է ընդունել երկու կերպ: Կամ դրանց անկապակցության ձևերը պակաս են արտադրող գրիչներից և հրատարակիչներից որպես բնագրի աղավաղում, և կամ, ընդհակառակն, անկապակցությունը պատկանում է հեղինակին, իսկ ուղղված ձևերը ծագում են արտագրող գրիչներից ու հրատարակիչներից, որոնք անկապակցությունը սխալ համարելով և շքնդունելով՝ ուղղել են լեզվի քերականական կանոններին համապատասխան:

ՀԱՄԱՌՈՑԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ազաթ.—Ազաթանգեղայ Պատմութիւն Հայոց, քննական բնագիրը Գ. Տէր-Մկրտչյանի և Ս. Կանայանի (Տփղիսի 1909 թ. քննական հրատարակությունից վերատպություն՝ աշխարհարար թարգմանությանը զուգահեռ), Երևան, 1983:

Բուգ.—Փառտոսի Բիւզանդացւոյ Պատմութիւն Հայոց, Երևան, 1987 (վերատպություն Բ. Պատկանյանի՝ 1883 թ. Պետերբուրգում կատարած հրատարակության):

Եզնիկ.—Եզնիկայ վարդապետի Կողբացւոյ, Եղծ աղանդոց, Թիֆլիզ, 1914:

Եղիշէ.—Եղիշէի Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին, աշխատութեամբ Ե. Տէր-Մինասեան, Երևան, 1957:

Խոր.—Մովսիս Խորենացւոյ Պատմութիւն Հայոց, աշխատութեամբ Մ. Արեղեանի և Ս. Յարութիւնեանի, Տփղիս, 1913:

Կորիւն.—Վարդ Մաշտոցի, բնագիրը ձեռագրական ալլընթերցվածներով, թարգմանութեամբ... ի ձեռն Մ. Արեղեանի, Երևան, 1941:

Փարպ.—Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց և Թուղթ առ Վահան Մամիկոնեան, քննական բնագիրը Գ. Տէր-Մկրտչյանի և Ստ. Մախասյանցի (Տփղիսի 1904 թ. քննական հրատարակությունից վերատպություն՝ աշխարհարար թարգմանությանը զուգահեռ), Երևան, 1982:

АНАКОЛУФ В ДРЕВНЕАРМЯНСКОМ ЯЗЫКЕ

П. И. ШАРАБХАНЫАН

Резюме

В статье рассматриваются вопросы нарушения правильной формально-синтаксической связи между элементами высказывания, когда члены предложения не соединяются по грамматическим правилам согласования, но подходят по смыслу. Существует несколько видов анаколуфа. В статье выявляются особенности каждого из них, разъясняются те параллельные грамматически правильные соединения между началом сложного предложения и его концом, из которых получаются неправильные сочетания. Рассматриваются также случаи, когда грамматическая несогласованность членов предложения исправляется при сличении разных рукописей и научно-критических изданий древнеармянских произведений.